


3077


ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Առանձնատիպ «Լեզվաբանական և հայագիտական
հետազոտությունների» հատոր առաջինից, 1951 թ.



7m
1822




ՍՏԱԽԵՅԱՆ ՌԻՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը նոր լույս է սփռում դիտության բոլոր բնագավառների և հատկապես հասարակական գիտությունների մի շարք բարդ և կնճռոտ հարցերի վրա: Այդ կլասիկ գործը, որ կարելի է կոչել «լեզվաբանական մանիֆեստ» մարքսիզմի մեջ, մեզ տալիս է ոչ միայն ընդհանուր տեսական դրույթներ իրենց լուծումով, այլև նշում է կոնկրետ լեզուների պատմական դար-դացման և օրինաչափությունների ճիշտ ուղիները: Այդ տեսա-կետից հայագիտության, մասնավորապես հայոց լեզվի և նրա պատմության մի շարք խնդիրների ուսումնասիրության ճիշտ գրվածքի և մոտեցման ուղղությամբ շատ անելիքներ կան:

Հայագիտության մեջ, դիտության դարձացման համընթաց կղել են այլևայլ ուղղություններ կամ մոտեցումներ, որոնք ար-տացոլել են իրենց դարի մտայնությունը և ուսումնասիրու-թյան մեթոդներն ու ուսալճանը: Չի կարելի ժխտել, վերջին հաշվով, որոշ նվաճումներ և ձեռք բերված փաստեր, բայց այժմ մեր գիտական խիստ պահանջները բավարարել դրանք, իհարկե, չեն կարող, մանավանդ որ կարիք ունեն վերանայվելու ոչ միայն բազմաթիվ նոր փաստերի առկայության պատճառով, այլև ուսումնասիրության նոր մեթոդոլոգիայով՝ մարքսիստական կուռ աշխարհայացքի լույսի տակ: Ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունները ունեն հենց այդպիսի լուսարձակի նշանա-կություն՝ թե տեսականորեն և թե գործնականորեն:

Հայտնի է, որ ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբա-նության հարցերը» աշխատությանը նախորդեց մի լայն դիս-կուսիա «Փրավդայի» էջերում, ուր անդադրեն հանդես եկան լեզվաբանական հարցերի շուրջ թե այսպիսի կերպով և որ



ուսմունքի» կողմնակիցները և թե ն. Մառի այդ «ուսմունքի» հակառակորդները. Գննվում էին և վիճարկվում բազմաթիվ հարցեր ու մոտեցումներ, որոնք հաճախ հակասական բնույթ էին կրում: Միայն ընկեր Ստալինի հեղինակավոր խոսքը վերջ տվեց լեզվաբանության ասպարեզում գոյություն ունեցած լատինալիզմին և մերկացրեց ն. Մառի կեղծ-մարքսիստական և վուլգար-մատերիալիստական «ուսմունքը»:

Ընկեր Ստալինի կլասիկ աշխատություններով լուծվեցին մի շարք լեզվաբանական պրոբլեմներ և հարցեր, ինչպես՝ 1) լեզվի ոչ վերնաշենք լինելը՝ հակառակ ն. Մառի պնդման, 2) լեզվի ընդհանուր ցեղային, ժողովրդական և ազգային բնույթը՝ հակառակ ն. Մառի կողմից շեշտվող միայն դասակարգային բնույթի, 3) լեզվի զարգացումը էվոլուցիոն ձևով, իր որակական երեքին առաջընթացով և ոչ թե թռիչքներով, 4) լեզվի խաչավորությունը տերիտորիալ ընդհանուր տարածություններում, որպես ինտեգրացիայի մի պրոցես՝ որոշ լեզվի գերիշխանությամբ (հաղթանակով), և ոչ թե հետևանք «միասնական լեզվաստեղծական պրոցեսի»՝ իր թռիչքներով և կոնկրետ լեզուների պատմության բացակայությամբ, ինչպես շեշտում էր ն. Մառը, 5) լեզվի գենեալոգիական՝ ազգակցական դրույթը իր պատմահամեմատական մեթոդով, հակառակ ն. Մառի «ստադիալ» տիպոլոգիայի և չորս էլեմենտներից ելած հնէաբանական մեթոդի, 6) մտածողության և լեզվի դիալեկտիկական միասնությունը՝ հակառակ ն. Մառի դրանց անջատելու տեսության՝ կապված նոր տխրահիվայի հետ, լեզվի ընդհանուր մասներից ազատազրկելու հետ, 7) լեզվաբանների, մանավանդ ռուս լեզվաբանների զրական գերը գիտության մեջ՝ հակառակ ն. Մառի ժխտողական վերաբերմունքի, 8) քերականության և հիմնական բառային ֆոնդի նշանակությունը լեզվի սպեցիֆիկումի գնահատման գործում՝ հակառակ ն. Մառի կողմից դրանց նսեմացման և այլն և այլն: Ակադ. Վ. Վինոգրադովը իր «Труды И. В. Сталина по вопросам языкознания»¹ աշխատության մեջ բերում է մոտ երկու տասնյակ այդպիսի նոր խնդիրներ, որ զբեւ և լուծել է ընկեր Ստալինը, ոչնչացնող քննադատության ենթարկելով ն. Մառի սխալ և իդեալիստական կոնցեպցիան այդ և նման լեզվաբանական խնդիրների նկատմամբ:

¹ «Известия» АН. СССР, Отделение литературы и языка, 1950 г., том IX, вып. 1. էջեր 36—38:

Կարիք չկա այստեղ մանրամասնորեն կանգ առնելու այդ-
պիսի փորձերի վրա և մանավանդ այն երկարատև լճացման վրա, որ
ստեղծվել էր լեզվաբանության բնագավառում՝ շնորհիվ Ն. Մա-
յիսի և նրա «աշակերտների» գործունեության:

Ընկեր Ստալինի պատմական ելույթը ոչ միայն վերջ դրեց
այդ վատառողջ վիճակին, որ նա կոչում է «արակչեկյան» ռե-
վիմ, այլև ստեղծեց իսկական մարքսիստական լեզվաբանության
հիմունքները, որոնց հետագա զարգացման ու ստեղծագործական
կիրառման ասպարեզում ամենից առաջ շահագրգռված են կոնկ-
րետ լեզուների հետազոտողները, մանավանդ, երբ հարցը վե-
րաբերում է այդ լեզուների պատմության ուսումնասիրությանը:

Այդ տեսակետից ես կմասնանշեի լեզվի ուսումնասիրու-
թյան մեջ նախ և առաջ այն, ինչ ընկեր Ստալինը կոչում է լեզ-
վի սպեցիֆիկում—քերականությունը և հիմնական բառային
ֆոնդը: Սրանց զարգացման խնդրում առաջին հերթին ի նկատի
ռենհեք բառային կաղմը, որը հարաճուն և փոփոխական է, ազդ-
վելով անմիջապես մեր կենցաղային, քաղաքական, իրավական
և այլ գործունեությունից. ապա հիմնական բառային ֆոնդը,
որը իր հիմքում կրում է բառարմատները և ավելի պահպանողա-
կան է ու մնայուն: Ինչ վերաբերում է քերականությանը, ապա
նա ավելի դանդաղ է փոխվում, սահելով իր մեջ լեզվական նոր-
մաների դարավոր ձևավորումը: Այս բոլորը, ինչպես ընկեր
Ստալինն է մատնանշել, ցույց է տալիս, որ լեզվի բովանդակու-
թյան սպեցիֆիկումը համաչափ չի փոփոխվում ու զարգանում,
այլ մեկ կողմը (լեքսիկականը) ավելի շուտ է արձագանքում
մեր նոր մտածողության և կոլտուրայի պահանջներին, քան
մյուսը (քերականականը):

Ինչ խոսք, որ բառերի կրումը և զգացումը ունի իր պատ-
մական բնույթը. այստեղ կարող են լինել մի կողմից միևնույն և
սակավ գործածվող բառեր կամ արմատներ, իսկ մյուս կողմից
այնպիսի բառեր կամ արմատներ, որոնք հիմք են հանգիստանում
բազմաթիվ նորանոր բառերի ստեղծման համար:

Որտեղ ուշագրավ պիտի լինեն նորանոր փոփոխությունների
գրգռապատճառները, որոնք, ինչպես դիտենք, հարստացնում են
լեզվի բառապաշարը, արտացոլելով նորանոր զաղափարների
յուրացումը, կոլտուրայի և տեխնիկայի բարձրացման աստի-
ճանը, մանավանդ գիտության զանազան ճյուղերի և արվեստի
բնագավառներում: Բայց բառափոխությունների մեջ կարող է

լինել ոչ միայն ներքին պատճառ, այլ արտաքին, երբ որեւէ լեզու պետական—քաղաքական նոր պայմանների հետեանքով կորցնում է իր սեփական որոշ բառերը և յուրացնում իշխող ժողովրդի լեզվի բառերը (օրինակ՝ պարսկական սև, սպիտակ, ճեմակ, կապույտ, կարմիր բառերի մուտքը հայերենի մեջ և ընդհանրապես անհայտացումը)։ Տեղական նորանոր բառերի ստեղծումը, ինչպես նաև բառերի այդ փոխառումը կարող է ստանալ պատմական մեծ նշանակություն, արտացոլելով տարբեր ժամանակաշրջաններ, տարբեր կուլտուրական աստիճաններ և կամ ազդեցություններ։ Այդ բառային մակընթացություն-սեղանավորությունը սովորական է բոլոր լեզուներում, ինչպես ընկեր Ստալինն է ասում՝ «Արդյունաբերության և դաշտնային տնտեսության, առևտրի և արհեստագործի, տեխնիկայի և գիտության անընդհատ աճումը լեզվից պահանջում է նրա բառարանը համալրել իրենց աշխատանքի համար անհրաժեշտ նոր բառերով ու արտահայտություններով»։¹

Բացի այս բոլորից, տվյալ լեզվի բառային ֆոնդի պատմահամեմատական ուսումնասիրությունը ինչպես, նաև նրա կուլտուրալ-քաղաքական և քերականական կողմերի նման քննումը տվյալ ժողովրդի համար ունի նաև ծագումնաբանական նշանակություն։ Ժողովրդի էթնոգենեզի խնդրում լեզուն ստանում է պատմագիտական խոշոր նշանակություն։ Ինչպես նշում է ընկեր Ստալինը՝ «Լեզվի ստրուկտուրան, նրա քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը մի շարք դարաշրջանների արդյունք է։ Պետք է ենթադրել, որ ժամանակակից լեզվի տարրերը սաղմնավորվել են դեռևս խոր հնագրություն, նախ քան ստրկության դարաշրջանը»²։

Ըստ այսմ տվյալ լեզվի էլեմենտները կրում են պատմական մեծ փոփոխություններ, որպես ժողովրդի պատմության արդասիք՝ սկսած հնագույն էպոխաներից, երբ այդ լեզվի բառապաշարը այնքան էլ հարուստ չէր։ Ժողովրդական էթնիկական լեզվի առաջացման պայմաններում մինչև վերջերս իշխում էր Ն. Մառի տեսակետը, որի համաձայն լեզուները ևս խաչավորվում են բազմիցս անգամ, լինելով դասակարգային։ Մառի հետևորդները մեզ մոտ պատրաստ էին Հայաստանի մոտ կրկու հարյուր հին տոհմային և ցեղային «լեզուներից» համախառն կամ պրոպորցիոնալ միացմամբ առաջ բերել հայերենը, իրենց

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանությունը», էջ 34։

² Նույն տեղ, էջ 39։

ուսուցչի պես չընդունելով լեզուների խաչավորման ժամանակ մեկ լեզվի դերակշռությունը: Մյուս կողմից նրանք ժխտում էին ժողովուրդների դադթն ու տեղափոխությունը, այսինքն՝ ընդունում էին Հայաստանի այդ հնագույն ցեղերի կատարյալ սեփեփովածությունը իրենց տեղում: Ընկեր Ստալինը, հակառակ Մաոի ու նրա «աշակերանների» այս դրույթի, մատնանշեց ոչ միայն ցեղերի բաժանվելն ու հեռացումը, այսինքն՝ տեղաշարժը, այլև նրանց լեզուների բախման և միացման ժամանակ մեկ լեզվի դոմինանտ լինելը, որը կարող է կամ իսպառ մահացման մատնել երկրորդին, կամ միևնույն ժամանակ յուրացնել նրա բառապաշարից որոշ քանակի բառեր: «...Մաչավորման դեպքում, — տոում է ընկեր Ստալինը, — լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, պահպանում է իր քերականական կառուցվածքը, պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը և շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր սրակը և աստիճանաբար մահանում: ... Ճիշտ է, այդ դեպքում տեղի է ունենում հաղթանակած լեզվի բառային կազմի որոշ հարստացում ի հաշիվ պարտված լեզվի, բայց դա ոչ թե թուլացնում, այլ, ընդհակառակը, ուժեղացնում է այն»¹:

Ուժեղ ներթափանցման ժամանակ իմ կարծիքով կարող է լինել նաև սակավաթիվ քերականական մասնիկների ընդունում, ինչպես այդ երևան է գալիս հայոց լեզվում, ուր ուժեղ ասիանիկ լեզվաձևերի հետ կան և հնդեվրոպական որոշ մորֆեմաներ: Քերականական որոշ ստացված ձևեր կան, օրինակ՝ մեզրերերենում, մեր բարբառներում (համեմատել՝ չորսինջի, վեցինջի...) և այլն:

Ընկեր Ստալինը, հակառակ Ն. Մաոի, հակված է որոշ դրական զնահատություն տալու այսպես կոչված պատմա-համեմատական մեթոդին: Նա ասում է. «Ն. Մա. Մաոը ճղճղան կերպով նշավակում է պատմա-համեմատական մեթոդը որպես «իդեալիստական»: Այնինչ, պետք է ասել, որ պատմա-համեմատական մեթոդը, չնայած իր լուրջ թերություններին, այնուամենայնիվ, ամփի լավ է, քան Ն. Մա. Մաոի իրոք իդեալիստական քառատարր վերլուծությունը...»² Ընկեր Ստալինը իրավամբ շեշտում է,

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 66—67:

² Նույն տեղում, էջ 74—75:

որ այդ պատմա-համեմատական մեթոդը լեզվաբանության մեջ ճշգրտւմ է դեպի աշխատանք», այնինչ Մառի հնէաբանական վերլուծումը իր հնարած շորս հնչյունա-ձևաբանական էլեմենտներով ոչ մի արդյունքի չի հասցնում:

Հնդերուպական լեզուներով զբաղվող գիտնականները, ուր-սած 19-րդ դարի առաջին քառորդից, մտքերն ոչ միայն պատմա-համեմատական մեթոդը, որի մասին գովեստով է խոսել նաև Գ. Էնգելսը՝ այդ մեթոդի «պատմականության» համար, այլև մեծ գործ կատարեցին լեզուների ազգակցությունը հայտնաբերելու և բազմաթիվ փաստեր ու օրինաչափություններ արձանագրելու աստիճանով: Բայց լեզվաբանական այդ գալուցները ըստ իրենց տեսական-մեթոդոլոգիական մոտեցման զուտ բուրժուական էին, թեպետ նրանց մեջ կային նաև առանձին գիտնականներ, որոնք տարեբայնորեն որոշ չափով մոտենում էին մատերիալիզմին ու դիալեկտիկային (Վ. Հոլմբրոդտ, Հ. Շուխարդտ և ուրիշներ): Բուրժուական լեզվաբանության մեջ գերակշռում են իդեալիստական ուղղությունները, ինչպիսիք են ֆորմալիստական գալուցը, որը իբրև դամիսանտ ընդունում է լեզվի ձևը, մասնավորը, պատահականը, անհատը, սերունդների գեներացիան և այլն, սոցիոլոգիական գալուցը, որը հենվում է Դյուրբհայմի սոցիալ-փիլիսոփայության վրա, հոգեբանական գալուցը, որը լեզվի ըմբռնումը և զարգացումը հանում է անհատի կամ հոսարական պատկերացումներից ու ապրումներից և այլն և այլն: Այս բոլոր գալուցները անտեսում են լեզվի զարգացումը որպես արգասիք այդ լեզուն կրող ժողովրդի կոնկրետ պատմության՝ նրա նյութական և հոգևոր բոլոր նվաճումներով: Բուրժուական լեզվաբանության այդ ուղղությունները իրենց իդեոլոգիական դիրքերով մեզ համար բացասական են, բայց իրենց կուտակած փաստական տվյալներից:

Ն. Մառը, անշուշտ, լավ մղումներից զրգված, սկսեց քննադատել այդ բուրժուական լեզվաբանությունը իր նախալեզվով, պատմա-համեմատական մեթոդի շարաշահումով, միզրացիայի գերադնանառումով և այլն: Մակայն նա ինքն ընկավ ծայրահեղությունների մեջ, հնդերուպաբանների տմեն մի (թեկուզ պետքական և դրական) տեսակետին մեխանիկորեն հակադրելով իր դրոյթները, որոնք մեծ մասամբ ավելի բացասական դուրս եկան: Օրինակ՝ եթե նրանք ընդունում էին, որ մի խումբ լեզուներ առաջացել են մի մայր լեզվից՝ «նախալեզվից», որ որոշ

ժամանակ (նախադասակարգային հասարակություններում) հնա-
րավոր էր, բայց քիչ չափերով և սահմանափակ տարածություն-
ներին վրա, ապա Ն. Մառը իր գործունեության երկրորդ շրջա-
նում լեզուների այգայիսի բաժանումը (Եղիֆեթեյնյիացիան)՝
համարում էր հետադիմական և բուրժուական բմբռնում, թե-
պես փաստերը չէին խոսում իր օգտին, Նա ամենուրեք և ամեն
ժամանակ առաջ էր քաշում խաչավորման (խառնվելու) սկզբուն-
քը՝ միացմամբ և ներթափանցմամբ (Երևանգրացիա), թեպետ
այդ «սկզբունքը», ինչպես փաստերն են ցույց տալիս, հակա-
սում է պատմական դարգացման ունալ ընթացքին:

Հայտնի է Ն. Մառի մեխանիկական հակադրումը հնդեւո-
պարաններին այդքան սիրված միգրացիայի տեսությանը, որը
ինչպես հայտնի է, նրանց կողմից նորմալիս սխառմի է վե-
րածված՝ անկախ ժամանակից և հասարակական վիճակից: Այդ-
քարացած տեսակետը աղակողմնորոշման էր ենթարկել նաև հայ
պատմաբաններին ու լեզվաբաններին, մանավանդ մեր ժողո-
վրդի և լեզվի գեներալիս խնդրում: Այնինչ միգրացիան իր գաղ-
թերով ու տեղաշարժերով, կարելի է ասել՝ սովորական էր ժո-
ղովուրդների նախկին վիճակում, երբ նրանք գեո ապրում էին
սոսմական—ցեղային ձևերով և ապրուստի համար, ինչպես և
ճնշման տակ ստիպված էին տեղափոխվել հետազար տեղերից:
հիշենք հոններին, հին գերմանացիներին (վանդալներին, գոթե-
րին, անգլոսաքսերին, ..), սկյութացիներին, կիմմերներին, բու-
ղարներին և այլն, և այլն: Մարքսը և էնգելսը այդ միգրացիան
ընդունում էին, և հստակ ժողովուրդների տեղաշարժերն ընդու-
նելու մեջ ոչ մի հակապատմական կամ բուրժուական կոնցեպ-
ցիայի խնդիր չկա: Ճիշտ է, բուրժուական շատ գիտնականներ
միգրացիան վեր էին ածում տեական մի ֆակտորի, աշխատում
էին շատ կուլտուրական, նյութական և էթնիկական ելույթներ
բացատրել միայն գաղթի միջոցով: Բայց դա, իհարկե, այժմ չի
ընդունվում առաջադեմ գիտության կողմից, մարքսիստ պատ-
մաբաններին կողմից:

Իսկ լինչ վերաբերմունք էր ցուցաբերում այս հարցի կա-
պակցությամբ Ն. Մառը՝ իր կյանքի վերջին շրջանում: Նա
կարծեա թե հակված էր ամբողջովին ժխտելու միգրացիայի երե-
վույթը՝ իրրե փաստ, որովհետև հնդեւոպարանները հակառակ
ծայրահեղության մեջ էին ընկել: Ն. Մառը օսմանցի թուրքե-
րին ընդի ժողովուրդ էր համարում, ոչ մի տեղից չեկած, իրրե

Փոքր Ասիայի հին կուլտուրական ցեղերի հետնորդ (տես նրա «О лингвистической поездке в восточное Средиземноморье» 1934, էջեր 55—60), այնինչ ոչ մի հին գրավոր աղբյուր, բնեռագիր, հետազոտություն-հոսմանական, հայկական, արարական և այլն, չի խոսում թուրքերի մասին՝ որպես փոքրասիական հին ժողովրդի: Ընդհանրապես, այդ աղբյուրները նշում են, որ նրանք Սուլեյմանի ղեկավարությամբ, մոտ իննսուն և վեց հազար մարդ, գաղթել են Այթաի ստորոտներից (այժմյան Օյրոտիայից) և հաստատվել Փոքր Ասիայի Իկոնիայի շրջանում: Սելջուկների հետ միասին դրանք հետագայում կազմում են Օսմանյան կայսրությունը, որ սխառնատիրոջն էին լինում թե՛ բնիկներին (սիրիացիներին, հայերին, հույներին, վրացիներին) և թե՛ նրանց հնազույն կուլտուրային: Իդեալ է հիշել այստեղ բնիկ Ստալինի հետևյալ խոսքերը այդ «կուլտուրական» թուրքերի մասին. «Հարյուրավոր տարիներ թուրքական աստիճանաշարները ջանք էին թափում աղճատելու, խորտակելու և ոչնչացնելու բալկանյան ժողովուրդների լեզուները»:¹

Կարիք չկա խոսելու Ն. Մառի գիտական գործունեության վերջին փուլի (1924—34 թթ.) մյուս հայտնությունների մասին. այդ արդեն արված է «Պրավդա» թերթում գիտությունների ժամանակ և մանավանդ ընկեր Ստալինի նշանավոր, դարազրույթ կազմող աշխատության մեջ: Նշենք միայն, որ Ն. Մառը, այնքան լավ գործեր տալով իր գործունեության առաջին շրջանում (1890—1912 թթ.), հնաշված սակավաբեղուն 1912—1924 թվերը, չկարողացավ անդամ իր հարեթական լեզուների տեսությունը ապացուցել կոնկրետ փաստերի և օրինաչափությունների հիման վրա: Նա հավելեց այդ լեզուների հիմնական նախամիջուկը («նախալեզուն»), շատ քիչ բացատրությամբ չստեղծեց համեմատական քերականություն: Բայց այդ ընթացքում, անկախ այդ «հարեթաբանությունից», նա տվեց մի շարք փայլուն աշխատություններ («Վարդանի առակների ժողովածու», «Գրիգոր Խանձթելու վարքագրերը», «Բարոյախոսը», «Անիի պեղումները» և այլն), որոնք պարունակում են արժեքավոր շատ նյութեր ու մտքեր:

Սակայն երբ Մառի ժողովրդականությունը իր «աշակերտների» կողմից անչափ մեծաբանվեց ու խթանվեց, պատճառելով

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 58:

իրեն որոշ մեծամտություն, և երբ նրա այդ երկրորդ փուլի շրջադարձին չեղավ լուրջ քննադատություն՝ մանավանդ մարքսիստական տեսանկյունից, — Մաուր իրեն զգաց անմրցակից և հավակնողը՝ մարքսիստական նոր լեզվաբանության ստեղծման գործում: Բնական է, որ ունենալով մարքսիստական քիչ պատրաստականություն, նա պիտի գլորվեր և գլորվեց արտառույց միբունդսներ և մտահայեցողական, ոչ պատմական ուղղությունների մեջ, որոնք փաստորեն սահմանակից էին իդեալիզմին ու մետաֆիզիկային: Այս բոլորը բացահայտվեց ընկեր Ստալինի կողմից, որը մեր լեզվաբանության հիմնադրին դրոթյունը և ճանաչումը վերադրեց մատականների կողմից ստեղծված արակչեկյան ռեֆորմի և լեզվաբանության թեորիական բացերին: Նա ցույց տվեց այդ «լեզվի նոր ուսմունքի» ամբողջ իդեալիզմը և մարքսիզմի հասարակացումն ու գեներացումը նրա կողմից, թեպետ ինքը Մաուր և իր աշակերտները այդ «ուսմունքը» հավակնում էին համարել մարքսիստական, իսկ դրա քննադատության նույնիսկ ամենափոքր փորձը համարում էին մարքսիզմի դեմ ուղղված ելույթ:

Ինչպես նշում է ընկեր Ստալինը, «Ն. Յա. Մաուր լեզվաբանության մեջ մտքից մարքսիզմին ոչ հատուկ անհամեստ, պարծենկոտ, մեծամյտ տոն, որը տանում է դեպի անհիմն ու թեթևամիտ ժխտումն այն ամենի, ինչ որ լեզվաբանության մեջ եղել է Ն. Յա. Մաուրից առաջ¹: Ն. Մաուր հավակնում էր նաև մեր սովետական հնադիրության հիմնադիրը հանդիսանալու և նրա բոլոր դրական նվաճումները իրեն վերադրելու, բայց նա այդ ուղղությամբ աշխատել է (այն էլ որպես սիրող) միայն նախառեկուսիսն շրջանում, զլխավորապես Անիում:

Գալով հայադիրության կոնկրետ խնդիրներին, ես կմտնանշեի, որ հնդկերոպաբան հայագետները հայոց լեզվի զննելիս սխալվելով տեղեկացրող կերպով շեշտը դնում են նրա հնդեվրոպական «շերտի» վրա, իսկ ոչ հնդկերոպական տարրերը, որոնք թվով քիչ իս անհամեմատ շատ են, համարում են «փոխառություններ», «ազդեցություններ» և այլն: Ն. Մաուր մի ժամանակ առաջ էր քաշում այդ տարրերի հավասարաշափ լինելը, տեսլով, որ հայերենը «արիո-հաբեթական» լեզու է, այսինքն խառնածին՝ թե հնդկերոպական տարրերից և թե հաբեթական

¹ Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 74»

(=տեղական, տախանիկ): Ես իմ „Хайаса—колыбель армян“, ինչպես և „К происхождению армянского языка“ աշխատություններում, ի նկատի առնելով մեր լեզվի կառուցվածքային, քերականական և բառային ֆոնդի առանձնահատկությունները, որ դալիս են նրա վոքաբարական կամ ինչպես հիմա ասում են ասիանիկ ընդհանուր կոմպոնենտից, ընթացել եմ այլ ուղղությամբ: Հայերի էթնիկական և լեզվական գոյացման սուբստրատը ես համարել եմ Հայաստանի անտառային ժողովուրդը (կամ ցեղախումբը), որ ապրում էր, Եփրատի վերին հոսանքի շրջանում՝ մոտավորապես էրզրումից մինչև Սվազ, և նրա լեզուն: Այդ լեզուն նման է եղել ասիանիկ (հին փոքրասիական) լեզուներին, թեպետ նրա հիմնական կորիզը հետագայում հարստացել է հնդեվրոպական, վրացական, խուռիտական (արմինական) — ուրարտական և այլ լեզուների բառային կադմի հաշվին: Երբ այդ լեզուն տարածվում է Ուրարտուի տերիտորիայի վրա, նա հաղթահարում է տեղական լեզուներն ու նրանց բարբառները: Այս երկարատև պրոցեսների հետևանքով ձևավորվում են ինչպես այդ հայաստական (=հայկական) լեզուն, այնպես էլ նրա բարբառները: Դրավոր կերպով 5-րդ դարում, հենց այդ հայկական (նախկին Հայաստայի) լեզուն է, որ մնացել է հետագա «գրաբար» անվան տակ: Քաղաքական հանգամանքների բերումով այդ հին համաժողովրդական պետական լեզուն 7—9-րդ դարերում սկսում է դադարել խոսակցական և ընդհանուր լինելուց, մանավանդ որ նա, ենթարկվելով միակողմանի զրական մշակման, հետզհետե հեռանում էր համաժողովրդական ընդհանուր խոսակցական լեզվից:

Այս պայմաններում, պետականությունից զրկված և մասնատված հայությունը ստիպված է լինում իր բարբառային խոսակցական միջավայրերը աստիճանաբար զարգացնել և տեղ տեղ, նույնիսկ քաղաքական-կուլտուրական կացություն, այդ բարբառները հասցնել ընդհանուր և գրական լեզվի աստիճանին: Այդպես պետք է մտնենալ, ըստ իս, մեր այժմյան արևելահայ (ավելի ճիշտ՝ հյուսիսային) զրական լեզվի կազմավորմանը, որը հիմք ունենալով մեր այժմյան Արարատյան բարբառը (բայց ոչ բարբառների որևէ խառնուրդ), մշակվել և զարգացել է՝ օգտագործելով նաև գրաբարյան բառապաշարը և այդ Արարատյան բարբառի քերականությունը: Մասնավորապես այս վերջին հանգամանքից ելնելով պիտի պնդել, «արեց», «բերեց», «տվեց» և

նման ձևերի վրա և թույլ չտալ ոմանց կողմից իրենց տեղական «արավ», «երեւով», «ավով» և այլ ձևերի դործածումը:

Նրկըրորդ կարեւոր հայագիտական խնդիրն է մեր բարբառների ուսումնասիրութիւնը, մանավանդ որ, դրանք ներկայումս մեր միասնական համաժողովրդական և պետական լեզվի առկայութեան պայմաններում դատապարտված են անհայտացման: Իհարկէ դրանք դասակարգային լեզու չեն, ինչպես բացատրում էր Ն. Մառը («արմենական» կամ «ը» լեզուն՝ ի հակադրութեւն «հայկական» կամ «ք» լեզվի), կամ ինչպես կարելի էր հասկանալ Ա. Դարբիջանի մատչան կոնցէպցիայից: Իմիջիայլոց մեր բարբառների «կը», «ում» և «ել» (—«ալ») խմբերի դասակարգումը տվել է զեռ 1869 թվին Ք. Պատկանյանը, որից ընդօրինակել է Հ. Աճառյանը, իսկ սրանից էլ Ա. Դարբիջանը, ինչպես իրավամբ մատնանշել է երիտասարդ գիտնական Հ. Մկրտչյանը:

Մեր գլխավոր խնդիրներից մեկն է նաև մեր լեզվի (այդ թվում նաև գրաբարի ու բարբառների) բառապաշարի ուսումնասիրութիւնը, մանավանդ դրանց արմատների և ստուգաբանութիւնների բացահայտումը, մի խնդիր, որ ցույց կառ թե՛ մեր լեզվի կազմութեան գենետիկ աղբյուրները և թե՛ ընդհանրապես այդ կարեւոր լեզվական դանձը, որպէս «բառային հիմնական ֆոնդ» (ըստ ընկեր Ստալինի): Այս գծով մինչև այժմ կատարված ամենամեծ աշխատանքը պատկանում է պրոֆ. Հ. Աճառյանին, որը իր 7 հատորանոց «Արմատական բառարանով» կարծես թէ լուծել է այդ պահանջը: Բայց նրա այդ երկարամյա հավաքական գործը, որ գրեթէ մի մարդու աշխատունակութիւնից վեր էր, գործնական և մասսայական օգտագործման տեսակետից շատ անհարմար է: Ինչպէս գիտել է նաև հայտնի լեզվաբան ու հայագետ Ա. Մեյնը (ընկ. Աճառյանի ուսուցիչը), այդ բառարանից պետք է հանվեր ոչ գիտական մասը, որ բերել է հեղինակը որպէս «ստուգաբանութիւններ» — սկսած միջնադարից մինչև մեր օրերը: Այդ պատմական հատվածը մեծ մասամբ շատ հեռու է այժմյան գիտութեան պահանջից և արտացոլում է իր դարի սխալատեսիկան կամ բառախաղացութիւնը՝ բառարմատների բացատրութեան մեջ: Եթէ մնացած գիտական մասը իր ստուգաբանական ճշտումներով տպվեր (և ոչ թէ ապակետիպ լիներ, ինչպէս որ կա), այն ժամանակ մենք կունենայինք մի հատորանոց արժեքավոր և գործնական աշխատութիւն, շատ պիտանի մանավանդ մեր ուսուցչութեան և ուսանողութեան համար:

Այդպիսի բառարանը պետք է բեռնաթափել նաև այն տեղեկ-
ցից, որը արհեստականորեն տարվում է հոգուտ հնգերոպարա-
նության ուղղության: Արմատական բառարան պետք է կազմել
նաև մեր բարբառների բառապաշարի համար, և այն ժամանակ
մենք կունենանք մի իսկական գանձ, որ կուտակել է հայ լե-
զուն իր դարավոր պատմության ընթացքում, սկսած դեռ հա-
յասայից:

Մեզ պիտի հետաքրքրի նաև մեր այժմյան «բառային կազ-
մը», որն անընդհատ կատարելագործվում է ու փոփոխվում, են-
թարկվելով մեր առօրյա պահանջներին: Բարեբախտարար մեր
օրերում հաջողվեց տպագրել չորս հատորանոց «Հայերենի բա-
ցատրական բառարանը» (պրոֆ. Ստ. Մալխասյանի), ռուս-հայ-
կական և հայ-ռուսական բառարանները (Ակադեմիայի Հեզվի
ինստիտուտ) և մի քանի մասնագիտական բառարաններ: Այժմ
պատրաստվում է ռուս-հայերեն չորս հատորանոց մեծ բառա-
րանը (Հեզվի ինստիտուտ), որը իր հիմքում ունենալու է զըլ-
խավորապես Ուշակովի ռուսաց բացատրական բառարանի թարգ-
մանությունը: Կարիք կա, իհարկե, և այլ բառարանների:

Ըստ իս կարիք կա ընկեր Ստալինի աշխատությունների լույսի
տակ կազմել նաև ընդհանուր լեզվաբանության մի ձեռնարկ:
Մեր Միության կենտրոններում կազմված ձեռնարկները, ինչպես
և մեզ մոտ եղածները (է. Աղայանի գիրքը) մեծ մասամբ ենթարկ-
վել են Ն. Մառի «տեսության» ազդեցությանը և չեն համապա-
տասխանում սովետական լեզվաբանության արդի մակարդակին:
Պիտի ավելացնել նաև, որ մեր հայագիտության տեսակետից
չենք կարող պատճենավորել ու թարգմանել նաև նոր կազմվե-
լիք ձեռնարկները, քանի որ մեզ ավելի կարող են բավարարել
այն ձեռնարկները, որոնք հազեցված լինեն հայոց, վրաց, իրա-
նական, լսեթական, ուրարտական, սեմական և նման լեզուների
նյութերով, չթերազնահատելով, իհարկե, հնգերոպական լեզու-
ները և մանավանդ ռուսերենը՝ իր հարուստ ու յուրահատուկ
լեզվամատերիալով:

Վերջապես, մենք պետք է քննադատորեն վերանայինք
նաև Ն. Մառի հայագիտական ժառանգությունը: Եթե ուրիշ
տեղերում զբաղվում են նրա տեսական-լեզվաբանական լուր-
դիրներով, ճնոր ուսմունքով, որն ընկեր Ստալինի կողմից հիմ-
նովին մերկացվեց որպես ֆորմալիստական և իդեալիստական,
որպես վուլգար մատերիալիստական մի «տեսություն», ապա

հայագետները շահագրգռված են նաև վեր հանելու Ն. Մառի սխալ տեսակետները թե մեր լեզվի և թե մեր պատմություն, ճարտարապետություն, հնագիտություն, ազգագրություն, հին գրականություն և այլ բնագավառներում:



Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանություն հարցերը» կլասիկ աշխատությունը հիմք է դնում նոր լեզվաբանության, նա կողմնացույց է բույր նրանց համար, ովքեր զբաղվում են թե ընդհանուր լեզվաբանությամբ և թե կոնկրետ լեզուների ուսումնասիրությամբ, մանավանդ այդ լեզուների պատմությամբ: Այդ տեսակետից ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունները ուղեցույց են նաև հայագետներին համար՝ հատկապես հայոց լեզվի պատմությունը, բարբառագիտությունը և հայոց էթնոլոգիան լուսաբանելու համար:

Ընկեր Ստալինը առաջադրում է մեզ երեք գլխավոր լարեր գիրներ՝ լիկվիդացնել արևելահայան սեփմբ լեզվաբանություն մեջ, հրաժարվել Ն. Մառի սխալներից և ներդրել (ընդերել) մարքսիզմը լեզվաբանության մեջ, համարելով այդ սովետական լեզվաբանության առողջացման ճանապարհը: Պետք է հուսալ, որ Հայաստանի լեզվական ֆրոնտի մեր աշխատողները, մանավանդ հայագետները, որոնք մի ժամանակ այնքան մեծ տոտուք տվին մառիզմին, այժմ կաշխատեն, իհարկե ոչ հապճեպ, առաջ արժեքավոր մենագրություններ և ուսումնասիրություններ՝ արժանի ստալինյան մեր դարին և մեր մեծ առաջնորդի լեզվաբանական կողմնորոշիչ աշխատությունը, որ իրավամբ մեզ համար հանդիսանում է «լեզվաբանական մանիֆեստ»:

Ընկեր Ստալինի տված լեզվաբանական ուղեցույցների, որպես լուսարձակ մի փարոսի լույսի տակ մենք պիտի կարողանանք է՛լ ավելի զարգացնել սովետական լեզվաբանությունը: Այդ տեսակետից պետք է ցույց տանք, որ սխալվում են ոմանք, զերբ կարծում են, թե մենք չպետք է քննադատենք եվրոպական լեզվաբանությունը կամ սրկէ րան փոխենք նրա մեջ: Մենք, իհարկե, նիհիլիստ չենք լինի Ն. Մառի նման, քննադատաբար կլուրացնենք անցյալի լեզվաբանության կուտակած հարուստ ժիաւտակոն նյութերը, բայց և կանենք շատ և շատ նոր մոտեցումներ, նոր ձևով կվերազնայատենք այդ փաստերը, կըրենք ու մարքսիստներն կլուսաբանենք նոր փաստեր: Մեզ, սո-

օխտական լեզվաբաններին այժմ առավել քան երբեք հարկա-
 վոր է ավելի շատ ինքնավստահութուն մեր ուժերի վրա, ավե-
 լի շատ խիղախում, բայց ավելի քիչ նախապաշարվածությու-
 ն Գիտությունը ոչ մի ժամանակ կանգ չի առել և ամեն բան մի
 անգամից չի լուծել։ Այդ պիտի ապացուցի նաև մեր սովետա-
 կան լեզվաբանությունը թե՛ ընդհանուր լեզվաբանության և թե՛
 կոնկրետ լեզուների ուսումնասիրության բնագավառներում։
 Բնական է, որ ետ չի մնա նաև մեր հայերենագիտությունը, որը
 ունենալով իր վաստակավոր շատ հայադեաների մեծածավալ և
 բազմաքանակ աշխատությունները՝ վաստական նյութի իրենց
 հսկայական պաշարով, այժմ ավելի պիտի մշակվի, լրացվի և
 մոտեցվի գիտության նոր պահանջներին։ Դրա առհավատչյան
 են ստալինյան դարի բարգավաճ պայմանները և դեպի գիտու-
 թյունն ունեցած մեր խրախուսանքն ու զնահատությունը։



Դմս
 1822



04]

4mu
1822